ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/62

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2022 թ. N 62

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ /ԵՊՀ/
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	ինստիտուցիոնալ հավատարմագրում, 6 տարի ժամկետով՝ 21.02.2015թ.- 21.02.2021թ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ, Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	20 փետրվարի 2020թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝	15 սեպտեմբերի 2020թ.
փորձագիտական այցի իրականացում՝	14-18 հունիսի 2021թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	18 հոկտեմբերի 2021թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	4 հունվարի 2021թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման բոլոր 10 չափանիշները գնահատվել են բավարար: Փորձագիտական խումբն ընդգծել է բարելավման անհրաժեշտություն ունեցող հետևյալ ոլորտները. «Կառավարում և վարչարարություն», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Հասարակական պատասխանատվություն», «Որակի ապահովման ներքին համակարգ»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԵՊՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԵՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ԵՊՀ-ն 2015 թվականին ստացել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով և, հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Համալսարանը բոլոր ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. Համալսարանն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

ԵՊՀ-ի կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են ՀՀ ՈԱԾ-ին և ԲՈՒՀ-ի առաքելությանը, ունեն հստակ ձևավորված կառուցվածք և արտահայտում են կրթական վերջնարդյունքները՝ միևնույն ժամանակ ապահովում համապատասխանությունը համալսարանի հետազոտական հավակնություններին:

ԵՊՀ-ն ունի կրթական ծրագրերի վերանայման կանոնակարգված համակարգ, որտեղ ուսանողների կարծիքը ևս կարևորվում է: ԵՊՀ -ն 2019 թվականից սկսել է ծրագրերի մշտադիտարկում: Կրթական ծրագրերը վերանայվում են յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ: ԵՊՀ-ում առկա քաղաքականություններն ու ընթացակարգերն ապահովում են ՈԱԾ-ին համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը, սակայն բացակայում են գրագողության դեմ պայքարի ժամանակակից տեխնոլոգիական գործիքները:

Համալսարանը, կարևորելով պրոֆեսորադասախոսական կազմի դերը որակյալ կրթություն ապահովելու գործում, պատշաճ ուշադրություն է դարձնում որակյալ դասախոսական անձնակազմի հավաքագրմանը: Նախաձեռնել է դասավանդման բարելավման փորձնական բարեփոխման ծրագիր, որը ներառում է յուրաքանչյուր կրթական ծրագրի ՊԴ կազմին ներկայացվող ինչպես մասնագիտական, այնպես էլ մանկավարժական պահանջների սահմանում:

ԵՊՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, թեև դրանք առայժմ հիմնված չեն ներքին և արտաքին խորը գնահատումների արդյունքների վրա: Առկա է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն:

ԵՊՀ-ն իր ուսումնական միջավայրի ստեղծման և ՌԾ-ով սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար հիմնականում ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով՝ ենթակառուցվածքներ, գրադարանային տպագիր էլեկտրոնային ռեսուրսներ, միաժամանակ շարունակականորեն իրականացվում են տեխնիկական և տեխնոլոգիական համալրման և հարստացման ջանքեր: ԵՊՀ-ն իր ՌԾ գերակայությունների հետ փոխկապակցված բյուջետավորման փորձ ունի: Իրականացվում է փաստաթղթաշրջանառության թվայնացում:

ԵՊՀ-ում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքներ, սակայն բավարար չեն տեսողական, լսողական, հենաշարժողական և այլ խնդիրներ ունեցող ուսանողների անվտանգ միջավայրի և ներառական կրթության ապահովման համար:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Առկա է մշակված առաքելություն, ռազմավարական ուղղություններ և խնդիրներ, դրանք արտացոլում են հիմնականում ներքին և մասամբ արտաքին շահակիցների կարիքները, հաստատված են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր: Սակայն դրանք լրամշակման կարիք ունեն, հատկապես առաքելության և նպատակների միջև ավելի համահունչ կապ ապահովելու առումով:

Թեև համալսարանը չափազանց երկար ժամանակ աշխատել է առանց գործող Հոգաբարձուների խորհրդի, այդուհանդերձ կառավարման մեջ մեծ ճկունություն է ցուցաբերել երկրում կատարվող փոփոխությունների ժամանակաընթացքում: Դեռևս չի զգացվում հստակ տարբերակումը ԵՊՀ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակների միջև:

ԵՊՀ-ն ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Չնայած ԵՊՀ-ն այժմ ունի ՈՆԱ կանոնակարգեր ինստիտուցիոնալ մակարդակում, սակայն բուհը նախընտրում է ապակենտրոնացված մոտեցում: Այդ պատճառով բուհում ստեղծվել են տարբեր մարմիններ ինստիտուցիոնալ և ֆակուլտետային մակարդակներում:

ՈԱ կենտրոնն ապահովված է համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով: Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում: Համակարգը պարբերաբար վերանայվում է: Որակի ապահովման ներքին հաակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար, որակի ապահովման /ՊԻԳԲ/ շրջափուլը տարբեր կրթական գործընթացներում գտնվում է տարբեր փուլերում:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը հիմնականում աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը

ԵՊՀ-ում գոյություն ունի հետազոտությունների լավ ձևավորված ավանդույթ, որոշակի ենթակառուցվածքներ, գիտական հարուստ և փորձառու աշխատակազմ, որից էլ ակնկալվում է հետազոտական հարուստ գործունեության իրականացում:

Թեև ԵՊՀ-ն իր տեսլականը սահմանել է որպես հետազոտական բուհ, սակայն այն չունի «սահմանված» ռազմավարություն ինստիտուցիոնալ կամ ֆակուլտետների մակարդակներում, այնուամենայնիվ ամբիոնները, ֆակուլտետները, ինստիտուտները իրականացնում են հետազոտություն: Ֆինանսավորվող հետազոտությունների բազմաթիվ ծրագրերը դեռևս ձևավորման փուլում են, ընդհանուր առմամբ, գոյություն ունի հետազոտության ոլորտում կուտակված փորձ և կան հետազոտական գործունեության համար ակնկալիքներ, որոնք կյանքի են կոչվում:

Հետազոտության միջազգայնացման ուղղությամբ ևս քայլեր կատարվում են, մասնավորապես բարձր վարկանիշ ունեցող մասնագիտական հանդեսներում գիտական աշխատությունների հրապարակում, գիտաժողովների մասնակցություն, գործուղումներ, պայմանագրերի (20 երկրների 264 համալսարանների հետ) կնքում, սակայն դրանց արդյունավետությունը գնահատված չէ:

ԵՊՀ-ն ունի օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված հաշվետվողականության բազմաթիվ ուղիներ, որոնք գործում են բոլոր օղակներում: Գործում է նաև արտաքին հաշվետվողականության հստակ համակարգ, միևնույն ժամանակ նկատվում է արտաքին շահակիցների հետ ակտիվ ներգրավվածության բացակայություն, և հաղորդակցման ոչ նախաձեռնողական բնույթ:

4. Առկա թերացումներն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրն հիմնականում իրատեսական է:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամին** շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 6 /վեց/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել վերանայված թերությունների վերացման ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - Զարգացման ռազմավարական հստակ մոդել ունենալու անհրաժեշտությանը, որի միջոցով կարելի է կատարել առաջիկա տարիների կրթության և հետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար անհրաժեշտ բյուջեյի կանխատեսում՝ հիմնված եկամուտների բազմազանեցման սցենարի վրա:
   - Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների միջև տարբերակման անհրաժեշտությանը:
   - ԳԱՑ-երի հստակեցմանը և որոշումների կայացումն ըստ ԳԱՑ-երի կազմակարպումը:

- Կրթական ծրագրի վերանայման համար ավելի երկար ժամանակ սահմանելու անհրաժեշտությանը՝ ավելի ռազմավարական և համապարփակ վերանայման գործընթաց ապահովելու համար:
- Հետազոտության միջազգայնացմանը՝ խրախուսելով իր լաբորատորիաներին համագործակցել ոչ միայն օտարերկրյա համալսարանների, այլև արտերկրի հետազոտական ինստիտուտների հետ:
- ՈՆԱ մեխանիզմների՝ կրթական ծրագրերի և դասընթացի մակարդակում կիրառմանը, որոնք հետևում են ուսանողների առաջընթացին այդ հարթությունում:
- Արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը, բարելավման գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավմանը,
- Համալսարանի գործունեության վրա որակի ապահովման գործընթացների ազդեցության բարձրացմանը:

4. Կազմակերպել ԵՊՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԵՊՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. ապրիլի 22
ք.Երևան